

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

Վիճակագրության պետական խորհրդի նիստի

22.01-02.02. 2001թ.

ժ. 10.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), խորհրդի անդամներ՝ Ա. Չիլինգարյան, Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Յու. Պողոսյան, Վ. Դավթյան, Հ. Պետրոսյան, խորհրդի քարտուղար Ա. Աղազարյան

Հրավիրված էին՝ Ա. Սիմոնյան (*Նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավար*), Տ. Խեչոյան (*Գլխավոր իրավախորհրդատու*), Ն. Մուշեղյան (*Ամփոփ վիճակագրության, հրապարակումների և մարկետինգի բաժնի պետ*), Ս. Ղարիբյան (*Ժողովրդագրության և մարդահամարի բաժնի պետ*), Գ. Մարտիրոսյան (*Գների և միջազգային համադրումների բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Զ. Միրզոյան (*Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ*), Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Ս. Ներսիսյան (*Մարդահամարի վարչության պետ*), Կ. Կույունջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանության բաժնի պետ*), Ա. Սարգսյան (*Տեխնիկական նախագծերի մշակման բաժնի պետ*), Լ. Հարությունյան (*Մեքենայական ծրագրերի և տեխնոլոգիաների բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ ինը հարց.

1. Պետական վիճակագրական աշխատանքների 2001 թվականի ծրագիրը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/
2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ճյուղային և ոլորտային ստորաբաժանումների կողմից վիճակագրության մարզային վարչություններին 2001թ. համար նախատեսված մեթոդական և գործնական օգնության ծրագրի ժամանակացույցը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Հ. Պետրոսյան, Ն. Մուշեղյան/
3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչությունների 2001թ. վիճակագրական-վերլուծական գեկուցագրերի պատրաստման և ներկայացման ժամանակացույցը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Հ. Պետրոսյան, Ն. Մուշեղյան/
4. «Ժամանողների հարցում» և «Մեկնողների հարցում» հարցաթերթերը և դրանց վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Ս. Ղարիբյան/
5. Գյուղական բնակչության սեռատարիքային կազմի մասին 2001թ. հունվարի 1-ի դրությամբ Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.
/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Ս. Ղարիբյան/
6. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունում և կենտրոնական ապարատի կառուցվածքում փոփոխություն կատարելու մասին.
/Ձեկուցող՝ Ա. Սիմոնյան/
7. ՀՀ-ում 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մասին.
/Ներկայացնող՝ Գ. Մարտիրոսյան/
8. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝
- 8.1 Հաշվետվություն TACIS ծրագրի «Ստվերային տնտեսության ուսումնասիրություն» նախագծի շրջանակում 2000թ. նոյեմբերի 10-17-ը Թբիլիսի կատարած այցելության վերաբերյալ.
/Ներկայացնող՝ Զ. Միրզոյան, Լ. Սարգսյան, Գ. Գյուրջյան/

8.2 Հաշվետվություն 2000թ. նոյեմբեր 27-ից դեկտեմբերի 16-ը ԱՄՆ –ի Հաշվառումների բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոն և դեկտեմբերի 18-20-ը ՄԱԿ –ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության դեպարտամենտ կատարած աշխատանքային այցելությունների վերաբերյալ
/Ներկայացնող՝ Լ. Հարությունյան, Կ. Կույումջյան, Ա. Սարգսյան, Գ. Քոչարյան/

9. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը քվեարկությամբ հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Պետական վիճակագրական աշխատանքների 2001 թվականի ծրագիրը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Ս. Մնացականյան, Ն. Մուշեղյան/

Ներկայացվեց 2001թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի նախագծի բովանդակությունը: Նշվեց, որ Ծրագիրը սահմանում է ՀՀ ԱՎԾ-ի, ինչպես նաև մյուս պետական մարմինների և այլ կազմակերպությունների՝ ՀՀ ԱՎԾ-ի կողմից ընդհանուր համակարգման միջոցով իրականացվող պետական վիճակագրական հաշվառման մեջ ընդգրկված ցուցանիշների ցանկը, ինչպես նաև դրանց հաշվառման կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ա. Չիլինգարյան

- Ծրագրի ներածության բովանդակությունը հարկ է համապատասխանեցնել «Պետական վիճակագրության մասին» և «ՀՀ 2001թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքների դրույթներին: Միաժամանակ, հարկ է նույն մասում տեղեկություն ներառել վճարովի ծառայությունների մատուցման համակարգի ներդրման մասին.

- «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքում առկա են պարտադիր պահանջներ Ծրագրի բովանդակության վերաբերյալ և, ընդհանրապես, հարկ է Ծրագիրը լիովին համապատասխանեցնել նշված օրենքի պահանջներին.

- նախագծի 3-րդ էջի վերջում հարկ չկա մասն կտրուկ ձևակերպումներ կատարել, որն իր մեջ պարունակում է ՀՀ ԱՎԾ-ին այլ մարմինների կողմից տեղեկություններ տրամադրելու պարտադրանք.

-Ծրագիրն իրենից ներկայացնում է հավաքական փաստաթուղթ և պետք է նշի նախատեսվող աշխատանքները, այլ ոչ թե իրականացման գործիքները.

-եթե վիճակագրության համակարգում առկա է որոշակի տեղեկատվության նախատեսված ժամկետից շուտ օպերատիվ կարգով տրամադրման իրողություն, ապա հարկ է, որ այդ փաստն արձանագրված լինի Ծրագրում:

Ս. Մնացականյան (առաջարկություն)

- այդ իմաստով, անհրաժեշտ է էջի վերջում աստղանիշով ձևակերպում կատարել այն մասին, որ յուրաքանչյուր ամսվա երկրորդ տասնօրյակի ավարտի դրությամբ ընթացիկ օպերատիվ նախնական տվյալները տրամադրվում են ՀՀ Նախագահին, ՉԼՄ-ներին և այլն: Այս ձևակերպումը պետք է տեղադրվի Ծրագրի բոլոր այն մասերում, որտեղ խոսք է գնում տեղեկատվության տրամադրման մասին.

Ա. Չիլինգարյան

- 55 էջում, Ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու նկատառումով, հարկ է հստակեցնել արդյունքների վերաբերյալ ձևակերպումը, այսինքն՝ երբ է

հրատարակվելու, ինչ տեսքով և որտեղ կարելի այն գտնել: Նույնը նաև ընտրանքային հետազոտությունների մասով.

-58 էջում հարկ է ավելացնել նոր հավելված՝ «Վիճակագրական օրացույց» անվանումով, որտեղ հստակ արձանագրված կլինի վիճակագրական այս կամ այն տեղեկատվության պատրաստ լինելու ամսաթիվը:

Ս. Մնացականյան

-61 էջում, կետ 3-ի (Հրատարակումներ մամուլում), կետ 4-ի (Ելույթներ հեռուստատեսությամբ) և կետ 5-ի (Ռ-ադիոհաղորդումներ) փոխարեն կատարել այսպիսի ձևակերպում՝ «Վիճակագրական տեղեկատվության տրամադրում լրատվական գործակալություններին» (կետ 3)՝ հետևյալ բովանդակությամբ.

կետ 3.1 Մամուլ հաղորդագրություններ, հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող երրորդ տասնօրյակի սկզբի դրությամբ. (ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական ցուցանիշները).

կետ 3.2 Եռամսյակային համառոտագիր (Եռամսյակային զեկույցի հրապարակումից հետո երկշաբաթյա ժամկետում).

կետ 3.3 Թեմատիկ հաղորդագրություններ.

- լրատվական գործակալություններին, պաշտոնաթերթերի փոխարեն, ընդգրկել անվճար տեղեկատվություն ստացողների ցանկում.

- Ներածության մեջ կատարել նշում, որ նախատեսվում է ներդնել վճարովի ծառայությունների համակարգ:

Վ. Դավթյան, Յու. Պետրոսյան, Հ. Պետրոսյան

-խմբագրական բնութի դիտողություններ

2001 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի նախագծի քննարկումը շարունակվեց 22.01 - 24.01-ը:

Հանձնարարվեց Ն. Մուշեղյանին, Տ. Խեչոյանին հնարավոր սեղմ ժամկետներում լրամշակել Ծրագրի նախագիծը և ներկայացնել հաստատման:

2001թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի լրամշակված նախագիծը Խորհրդի հաստատմանը ներկայացվեց 30.01.01-ին:

Որոշեցին՝ հաստատել 2001թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը:

/Զվեսարկության արդյունքները – կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

2. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության ճյուղային և ոլորտային ստորաբաժանումների կողմից վիճակագրության մարզային վարչություններին 2001թ. համար նախատեսված մեթոդական և գործնական օգնության ծրագրի ժամանակացույցը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան, Ն. Մուշեղյան/

3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչությունների 2001թ. վիճակագրական-վերլուծական զեկուցագրերի պատրաստման և ներկայացման ժամանակացույցը հաստատելու մասին.

/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան, Ն. Մուշեղյան/

26.01.01. նիստում Խորհուրդը սկսեց քննարկել Օրակարգի երկրորդ և երրորդ հարցերը: Հաշվի առնելով, որ երկու փաստաթղթերը, բովանդակային առումով, բխում են տարածաշրջանային քաղաքականության դրույթներից, Խորհուրդը հարկ համարեց դրանք քննարկել միասին:

Նշվեց, որ ժամանակացույցերը ուղեցույց են հանդիսանալու Ամփոփ վիճակագրության, հրապարակումների և մարկետինգի բաժնի համար տարվա ընթացքում վերահսկելու տարածքային ստորաբաժանումների կողմից այդ աշխատանքների կատարումը:

Խորհրդի անդամների կողմից արված դիտողությունների արդյունքում պարզվեց, որ երկու փաստաթղթերը ուղղակիորեն բխում են վիճակագրության բնագավառում

տարածաշրջանային քաղաքականություն մշակելու անհրաժեշտությունից, ուստի անհրաժեշտ է հստակ կանոնակարգման ենթարկել ինչպես տարածքային ստորաբաժանումների աշխատանքը, այնպես էլ աշխատանքների բաշխումը ՀՀ ԱՎԾ կենտրոնական ապարատի և տարածքային ստորաբաժանումների միջև: Այս ենթատեքստով երկու նախագծերի քննարկումը հետաձգվեց մինչև վերոնշյալ տարածաշրջանային քաղաքականության հայեցակարգի նախագծի մշակումը:

30.01.01. նիստում Խորհուրդը վերստին անդրադառնալով վերոնշյալ երկու հարցերին և հաշվի առնելով կետ 3-ում ներկայացված ժամանակացույցի, ժամանակային առումով, կարևորությունը Ամփոփ վիճակագրության, հրապարակումների և մարկետինգի բաժնի համար, Ս. Մնացականյանի կողմից առաջարկվեց հարցը կարգավորել ոչ թե Խորհրդի որոշմամբ, այլ ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով:

Որոշեցին՝ հանձնարարել Ամփոփ վիճակագրության, հրապարակումների և մարկետինգի բաժնին (Ն. Մուշեղյան), ղեկավարությամբ Խորհրդի անդամ Հ. Պետրոսյանի և համաձայնությամբ Խորհրդի մյուս անդամների, պատրաստել հրամանի նախագիծ «ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության մարզային վարչություններին 2001թ. վիճակագրական-վերլուծական զեկուցագրերի պատրաստման և ներկայացման ժամանակացույցը» հաստատելու մասին: *(արձանագրային)*

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

4. «Ժամանողների հարցում» և «Մեկնողների հարցում» հարցաթերթերը և դրանց վերաբերյալ Հրահանգը հաստատելու մասին.

/Ձեկուցող՝ Գ. Գևորգյան, Ս. Ղարիբյան/

Նշվեց, որ «Ժամանողների հարցում» և «Մեկնողների հարցում» հարցաթերթերը և դրանց լրացման կարգի մասին Հրահանգը նախատեսված են «Միգրացիայի հետազոտություն» ծրագրի շրջանակում անցկացվող հետազոտության համար: Հետազոտության նպատակն է ստանալ միգրացիայի ծավալների, սեզոնայնության, միգրանտների քաղաքացիության, ազգության, սեռատարիքային կազմի, ամուսնական վիճակի և այլնի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվություն: Դիտողություններ և առաջարկություններ՝

Ս. Մնացականյան

- ըստ անցկացման տեխնիկայի ու հարցաշարի և ըստ սպասվելիք արդյունքների, այս հետազոտությունն ունի սոցիալական, թե սոցիոլոգիական բնույթի է:

Ս. Ղարիբյան

- շեշտադրումը կատարված է սեզոնայնության վրա պարզելու համար թե ըստ սեզոնների ինչով է պայմանավորված միգրացիան: Սա սոցիոլոգիական հետազոտություն է ըստ սպասվելիք արդյունքների:

Գ. Անանյան

- խախտված է հարցաթերթերի ձևը.
- Հրահանգը բավարար տեղեկատվություն չի պարունակում հարցաթերթերը լրացնելու համար.
- հարցաթերթի կրթության մասն իր բովանդակությամբ հակասում է «Կրթության մասին» ՀՀ օրենքին

Վերոնշյալ դիտողությունները հաշվի առնելով, հանձնարարվեց Ս. Ղարիբյանին սեղմ ժամկետում լրամշակել հարցաթերթերը և ներկայացնել հաստատման:

02.02.2001թ. նիստում Խորհրդի հաստատմանը ներկայացվեցին «Ժամանողների հարցում», «Մեկնողների հարցում» հարցաթերթերը և դրանց վերաբերյալ Հրահանգը:

Որոշեցին՝ հաստատել «Ժամանողների հարցում» և «Մեկնողների հարցում» հարցաթերթերը և դրանց վերաբերյալ Հրահանգը.

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

5. Գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի մասին 2001թ. հունվարի 1-ի դրությամբ Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման Հրահանգը հաստատելու մասին.
/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ս. Ղարիբյան/

Նշվեց, որ ներկայացված պետական վիճակագրական հաշվետվությունն իր Հրահանգով և երկու հավելվածով նախատեսված է գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի վերաբերյալ, տարեկան կտրվածքով, վիճակագրական տեղեկատվության ստացման համար:

Գիտողություններ և առաջարկություններ՝
Յու. Պողոսյան

-հաշվետվության ձևում ավելացնել առանձին սյունակ յոթ տարեկան երեխաների տարիքային խմբի համար

Գ. Անանյան

-նաև վեց տարեկան տարիքային խմբի համար առանձին սյունակ

Ա. Զիլինգարյան

-անհրաժեշտ բոլոր տարիքային խմբերը առանձին սյունակներով և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար, ներառել հաշվետվության ձևում.

Ս. Մնացականյան

-առկա են սխալ ձևակերպումներ սուբյեկտների կազմակերպչաիրավական և սեփականության ձևերի մասով.

Որոշեցին՝ հանձնարարել Ժողովրդագրության և մարդահամարի բաժնին (հավաք) (Ս. Ղարիբյան), Գլխավոր իրավախորհրդատուին, Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնին (Ա. Շաբոյան), Գյուղատնտեսության բաժնին (Ա. Ավագյան), Ամփոփ վիճակագրության, հրապարակումների և մարկետինգի բաժնին (Ն. Մուշեղյան), Զբաղվածության և աշխատանքի վարձատրության բաժնին (Զ. Ավոյան) և Տնային տնտեսությունների բաժնին (Զ. Մագուչանց), հաշվի առնելով բոլոր դիտողությունները, ավարտուն տեսքի բերել Գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի մասին 2001թ. հունվարի 1-ի դրությամբ Ձև թիվ 9-Ս պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման Հրահանգը և ներկայացնել Խորհրդի հաստատմանը հաջորդ նիստում:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

6. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունում և կենտրոնական ապարատի կառուցվածքում փոփոխություն կատարելու մասին.

/Զեկուցող՝ Ա. Միսնոյան/

Նշվեց, որ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից ս. թ. օգոստոսի 15-ի թիվ 09 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրության 6.3.1 կետով սահմանված ՀՀ ԱՎԾ-ի կառուցվածքում, որպես կենտրոնական ապարատի կառուցվածքային ստորաբաժանումներ ներկայացված են նաև Մարդահամարի վարչությունը և Տարածքային ստորաբաժանումների կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացի ֆինանսատնտեսական պլանավորման և կոորդինացման բաժինը, իսկ Տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության կազմում վիճակագրական դասակարգիչների բյուրոն, ճյուղային բնույթի վիճակագրական տեղեկատվության հավաքագրման և սոցիալ-ժողովրդագրական բնույթի վիճակագրական տվյալների հավաքագրման բաժինները: Նշված ստորաբաժանումների ֆինանսավորումը չի կատարվում ՀՀ պետական բյուջեի «ՀՀ ԱՎԾ-ի կենտրոնական ապարատի պահպանման» գործառնական դասակարգման միջոցների հաշվին և դրանց հաստիքների քանակը սահմանված չէ ՀՀ վարչապետի 1998թ նոյեմբերի 6-ի «Պետական կառավարման մարմինների աշխատողների առավելագույն թվաքանակը և ղեկավարի

տեղակալների թվաքանակը սահմանելու մասին» թիվ 620 որոշմամբ: Ինչը նշանակում է, որ նշված ստորաբաժանումները չեն կարող դասվել որպես ՀՀ ԱՎԾ-ի կենտրոնական ապարատի «վիարժեք» ստորաբաժանումներ: Տարբերությունից խուսափելու և նշված խնդիրը «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի դրույթներին համահունչ դարձնելու նկատառումներից ելնելով, ՀՀ վիճակագրության Պետական խորհրդի հաստատմանն է ներկայացվում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու հարցը:

Հաշվի առնելով, որ խնդիրն, ըստ էության, վերաբերում է նշյալ ստորաբաժանումների ֆինանսավորման ապահովմանը և դեռևս հստակ չէ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության վերջնական դիրքորոշումն այս հարցում /ՀՀ ԱՎԾ կանոնադրությունում և կենտրոնական ապարատի կառուցվածքում փոփոխություն կատարելու միջոցով խնդրի լուծման տարբերակը ևս առաջարկվել է ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից/ առաջարկվեց (Ա. Միսնյան) հարցը հանել օրակարգից:

Որոշեցին՝

1. Խորհրդի նիստի օրակարգից հանել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունում և կենտրոնական ապարատի կառուցվածքում փոփոխություն կատարելու մասին հարցը.
2. Հանձնարարել Նախագահի տեղակալ-ծառայության աշխատակազմի ղեկավարին շարունակել քննարկումները ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ խնդրին վերջնական լուծում տալու նպատակով և արդյունքների մասին զեկուցել Խորհրդին:
*/արձանագրային/
/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

29.01.01.-ի նիստ

7. ՀՀ-ում 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մասին.

Նշվեց, որ համաձայն ՀՀ-ում սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության, յուրաքանչյուր տարի կատարվում է սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ, ինչի համար հիմք են հանդիսանում տնային տնտեսությունների բյուջետային ծախսումների մասին ամենամսյա հետազոտության նյութերը: 2000թ. տնային տնտեսությունների տնտեսությունների հետազոտության ձախողման պատճառով 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների վերահաշվարկ կատարվել է հիմք ընդունելով նախորդ տարվա համար հաշվարկված կշիռները կատարելով որոշ փոփոխություններ:

Որոշեցին՝ 1. ընդունել ի գիտություն ՀՀ-ում 2001թ. սպառողական գների ինդեքսների հաշվարկման համար սպառողական զամբյուղի կշիռների հաշվարկման մասին տեղեկատվությունը.

2. հանձնարարել Գների և միջազգային համադրումների բաժնին (Գ. Մարտիրոսյան), 2001թ. առաջին եռամսյակի արդյունքներից ելնելով, ներկայացնել տեղեկատվություն կիրառման ընթացքի վերաբերյալ:

/արձանագրային/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

8. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին՝ Հաշվետվություն TACIS ծրագրի «Ստվերային տնտեսության ուսումնասիրություն»

նախագծի շրջանակում 2000թ. նոյեմբերի 10-17-ը Թբիլիսի կատարած այցելության վերաբերյալ.

- 8.1 Հաշվետվություն 2000թ. նոյեմբեր 27-ից դեկտեմբերի 16-ը ԱՄՆ –ի Հաշվառումների բյուրոյի միջազգային ծրագրերի կենտրոն և դեկտեմբերի 18-20-ը ՄԱԿ –ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության դեպարտամենտ կատարած աշխատանքային այցելությունների վերաբերյալ.

Որոշեցին՝

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

30.01.01.-ի նիստ

9. Այլ հարցեր

- 9.1 Հաղորդում ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀԲ վարկի հաշվին ֆինանսավորված «Տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտություն» ծրագրը 2001թ. շարունակելու մասին:

/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան/

Խորհուրդ հաղորդումն ընդունեց ի գիտություն

- 9.2 ՀՀ առողջապահության նախարարության կոլեգիայի կողմից հաստատված Ձև թիվ 88 «ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» ամսեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

/Ներկայացնող՝ Յու. Պողոսյան/

Որոշեցին՝

1. լրացուցիչ քննարկել ՀՀ առողջապահության նախարարության հետ իրենց վարչական ռեգիստրով հաշվառում իրականացնելու մասին.

2. արդյունքների մասին ներկայացնել տեղեկատվություն Խորհրդի առաջիկա նիստում:

/արձանագրային/

/Քվեարկության արդյունքները-կողմ՝7, դեմ՝0, ձեռնպահ՝0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան